

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՀԱՅ ԿԱՄԱԽՈՐՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ.

Ապրիլի 15 և 16-ը ս. Էջմիածնում պատմական օրեր էին: 15-ի առաւօտեան չորեքշաբթի օրը լուր ստացուեց, ուղարկուած յատուկ սուրհանդակի միջոցով՝ որ հայ կամաւորների խումբը գալիս է Երևանից: Վեհափառ Հայրապետը պատուիրել էր կարևոր պատրաստութիւններ տեսնել ընդունելու կամաւորներին պատշաճ կերպով: Վեհափառի հրամանով ընդառաջ էին գնացել մինչև Զուարթնոց աւերակ եկեղեցին Տ. Աշոտ եպիսկոպոս և Տ. Բաբգէն վարդապետ: Վաղարշապատի և շրջակայքի ամբողջ ժողովուրդը մօտ 4 վերստ տարածութեան վրայ բռնել էին ճանապարհի երկու կողմերը: Հետզհետէ երևանից բազմաթիւ կռքեր եկան ս. Էջմիածին՝ երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսը, քաղաքագլուխ պ. Ս. Խաչատրեանը և բազմաթիւ քաղաքացիներ մինչև ս. Էջմիածին եկել էին՝ կամաւորներին ուղեկցելով: Ժամը 5-ի մօտերը Զուարթնոցի մօտ ճանապարհի վրայ Վեհափառ Հայրապետից ուղարկուած ներկայացուցիչները և ժողովրդի խումբն բազմութիւնը շրջապատեց հայ կամաւորների խմբապետներին: Խմբապետներ Քեռին, Խէչօն, Դրօն, Համազասպը գլխաւորութեամբ բոլոր կամաւորների հրամանատար Վարդանի՝ շարքով կանգնած և շրջապատուած կամաւոր զինուորներով-ձիաւոր և հետիոտն, Արարատեան դաշտի պատմական վայրում մի սքանչելի պատկեր էին ներկայացնում: Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի միաբանութեան կողմից զգացուած ողջոյնի ճառեր արտասանեցին Տ. Աշոտ եպիսկոպոսը և Տ. Բաբգէն վարդապետը, իսկ Վաղարշապատի ժողովրդի կողմից պ. Յովհաննէս Մու-

շեղեանքի ճառերին պատասխանեց խմբապետ Վարդանը:

Հանդիսաւոր երթը առաջ շարժուեց դէպի ս. Էջմիածին: Մինչև Վանքի դուռը ժողովուրդը խանդավառ կեց-
ցէներով դիմաւորեց հայ քաջերին: Փողոցի վրայ գտնուած
աների պատշգամբներն ու պատուհանները զարդարուած
էին դրօշակներով: Պատշգամբներից ծաղիկներ էին ցանում
կամաւորների վրայ: Մայր Աթոռի միաբանութիւնը
Վանքի դրսի դռան առաջ դիմաւորեց խմբապետներին և
կամաւորներին, ուղեկցելով նրանց հաճար, Նկեղեցու զան-
գերքը զօդանշում էին շատ խորհրդաւոր կերպով—Վանքի
հնադարեան պարիսպներն անգամ, որ շատ պատմական
դէպքերի լուռ վկաներ են, կարծես զգում էին բոպէի խոր-
հրդաւորութիւնը: Ժողովրդի և միաբանութեան աչքերից
կաթիլ կաթիլ արցունքներ էին թափւում, իսկ այդ ար-
ցունքները մարմնացումն էին այն խորհրդաւոր բուն՝ սո-
վորականից բոլորովին տարբեր, զգացմունքների, որ մեզ-
նից իւրաքանչիւրը կրում էր իւր կրծքի տակ: Արձանի
լուծեամբ ամէնքը իրենց քայլերը ուղղեցին Մ. Տաճար,
խմբապետները ծունկ չօքելով համբուրեցին Իջման ս. սեղա-
նը, լուռ և խորհրդաւոր կերպով աղօթում էին առ Աստուած,
իսկ միաբանութիւնը ու ժողովուրդն էլ նրանց համար էին
աղօթում, որ կարողանան քաջութեամբ կռուել և յաղթել
դաւաւոր բռնակալ տաճիկներին, ազատելով մեր մայրե-
րին, քոյրերին ու եղբայրներին պատմական տանջանքնե-
րից: Երեկոյեան ամբողջ ժամերգութեան ներկայ էին նոքա:
Ժամերգութիւնից յետոյ խմբապետները յատուկ պատ-
րաստուած սենեակներում հանգիստ առին: Կամաւոր զի-
նուորներին տեղաւորեցին Վանքի հիւրատանը, սեղանա-
տանը, Ճեմարանի ընդարձակ ննջարանում, Ճեմարանի
ներսը սենեակներում, նոր շինուած մանկավարժական
թանգարանում, գիւղի դպրոցական շինութեանց մէջ: Ժամը
8-ին խմբապետները ներկայացան Վեհափառ Կաթողիկո-
սին: Վեհափառը օրհնեց նրանց և խօսակցեց, հիւրասի-
րելով սուրճով: Ժամը 9-ին բոլոր խմբապետները, հարիւ-
րապետներն ու տասնապետները ընթրիքի հրաւիրուեցին

Ճեմարանի սեղանատանը: Ընթրիքին ներկայ էին Մ. Աթոռի միաբանութիւնը, Երևանից ուղեկցող ուսւ սպայ Օզօլ, պ. Համբարձում Մելիքեան, տիկին Զարէլ և Դաւիթ Զաւրեան ամուսիններ և ուրիշները: Զգացուած բաժակաճառեր առաջարկեցին Տ. Սահակ արքեպիսկոպոս, Տ. Աշոտ եպիսկոպոս, Տ. Բաբգէն վարդապետ, Տ. Գրիգոր, խմբի խաչակիր քահանան, Զաւրեան, Օզօլ և ուրիշները: Տ. Սահակ արքեպիսկոպոսն առաջի կենացը առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան և ամբողջ Օգոստոսփառ Տան կենացը: Օգը թնդաց կեցցէներով: Խմբապետ Վարդանը առաջարկեց խմել Վեհափառ Հայրապետի կենացը, ամէնքը ոտքի կանգնելով խանդավառ կեցցէներով խմեցին Վեհափառ Հայրապետի կենացը, մի շարք բարեմաղթութիւններ անելով: Ճոխ ընթրիքը վայելելուց յետոյ խմբապետները գնացին հանգստանալու: Միւս բոլոր զինուորներին ևս տրուեց ընթրիք: Վանքի և Ճեմարանի բակերում այդ երեկոյեան առանձին ոգևորութիւն էր տիրում: Գիշերը շատերը քուն չունէին՝ երգում և ուրախանում էին: Միւս առաւօտեան վաղ ամէնքը ոտքի վրայ էին: Վեհափառ Հայրապետի հրամանով Ճեմարանի ընդարձակ բակում պէտք է կատարուէր Կայսերական մաղթանք: Ժամը 8-ից քիչ անց Ճեմարանի հարաւային բակում բոլոր 4 գնդի հայ ձիաւոր և ոտաւոր կամաւորներն իրենց խմբապետներով, գլխաւորութեամբ Վարդանի, կազմ պատրաստ էին: Ճեմարանի հանդիսարանի դիմաց միաբանութիւնը շուրջառ առած սպասում էր Վեհափառ Կաթողիկոսին: Վեհափառը քիչ յետոյ շրջապատուած եպիսկոպոսներով երկաց, օգը թնդաց կեցցէներով: Վեհափառն ևս բարեհաճեց շուրջառ առնել, որից յետոյ սկսուեց Կայսերական մաղթանքը, ներկայութեամբ խուռն ժողովրդի: Ուղիղ Վեհափառի առաջ կամաւորներից մէկը բռնել էր դրօշակը, եռագոյն՝ կարմիր, սպիտակ, կանաչ, ոսկեզօծ շքեղ ծուպերով, հայերէն և ռուսերէն գրութեամբ «Армянская Дружина», ապա խմբապետները շարքով կանգնած: Բոպէն խորհրդաւոր էր, եղանակը պայծառ և ամէնքի դէմքի վրայ նկատուում էր բոպէի տպաւորութիւնը: Կատարուեց Կայ-

սերական մաղթանքը, որից յետոյ պէտք է խօսէր Վեհափառը: Մի քանի վայրկեան լռութիւն տիրեց, գրիչը անզօր է արձանագրելու այն խորհրդաւոր զգացմունքը՝ որ տիրել էր բոլորին: Ամէնքի մէջ աչքի ընկնող իւր վեհութեամբ ալեգարդ Վեհափառը ընդհատեց այդ խորհրդաւոր լռութիւնը և դառնալով հայ կամաւորներին՝ իւր հայրական խօսքն ուղղեց նրանց: Չափազանց զգացուած էր Վեհափառ Հայրապետն՝ Նորա իւրաքանչիւր խօսքն ամէնքը լարուած ուշադրութեամբ լսում էին, յուզիչ և ազդու էին Վեհափառի խօսքերը՝ և երբ Վեհափառն ասաց. «Գնացէք, Չեզ են սպասում իմ տանջուած զաւակները, գնացէք ազատեցէք նրանց կոտորածից և վրէժխնդիր եղէք մեր դարաւոր թշնամուց, մեր թշնամին մարդասիրութեան սահմանից դուրս է եկել», այդ բոլորէին խմբապետները և կամաւորները կարծես կատաղի առիւծ դարձան, նոքա ալեգարդ Հովուապետի խօսքերից ոգևորուած՝ ուզում էին թռչել Արարատ լեռան միւս կողմը և սկսել իրենց համար վաղուց պանծալի կատաղի կռիւր վայրենի քրդերի և բռնակալ տաճկի դէմ: Իւր ճառի մէջ Վեհափառն օրհնեց արեւելեան տանջուած ազգերի պատմական պաշտպան Ռուսաց Կայսրին և նորա փառապանձ հերոս զօրքին, քաջալերեց հայ կամաւորներին, որ ուրա հերոս զօրքի հետ քաջութեամբ կռուեն և Տաճիկ բռնակալ լուծը ընդմիշտ թօթափեն տանջուած հայ ժողովրդից: Վեհափառի խիստ զգացուած հայրական խօսքերից յետոյ օդը թնդաց կեցցէներով: Ապա Ճեմարանի կողմից խօսեց Տեսուչ Ս. Մալխասեան: Վարդանը և միւս խմբապետները հերթով մօտեցան Վեհափառին և համբուրելով հոգևոր Տիրոջ ս. աջը՝ ստացան Նորա օրհնութիւնը: Վեհափառը կրկին օրհնելով ամէնքին՝ վերադարձաւ Վեհարան: Հնչեց մուզիկան: Ճեմարանի դարպասով հետզհետէ ճամբայ ելան հայ քաջերը: Կրկին ժողովրդի կեցցէները և ուրախութեան արցունքները ցօղեցին հայ կամաւորներին: Մինչև Մարգարա գիւղը՝ երասխի ափը կամաւորներին ուղեկցեցին Տ. Տ. Աշոտ և Բազրատ եպիսկոպոսները, Տ. Տ. Բաբգէն և Վրթանէս վարդապետներն ու Թադէոս արեղան:

Մաղթանք Վանի գրաման առթիւ.

Մայիսի 9-ի առաւօտեան լուր ստացուեց՝ որ Ռուս քաջամարտիկ զինուորները և հայ կամաւորները գրաւել են Վանը։ Շուտով այդ մասին ստացուեց պաշտօնական հեռագիր։ Չտեսնուած ուրախութեան զգացմունքներով մարդիկ միմեանց շնորհաւորում էին։ Եւ այդ հասկանալի է, որ հայաշատ պատմական Վան քաղաքը դարերով Տաճիկ բռնակալ լծի տակից վերջապէս ազատուեց։ Վեհափառի հրամանով միւս օրը մայիսի 10-ին, Հոգեգալստեան օրը, ս. պատարագից յետոյ կատարուեց Կայսերական գոհաբանական մաղթանք։ Մաղթանքի աղօթքը կարդաց Տ. Աշոտ եպիսկոպոսը։ Տաճարի ներսն ու դուրսը լի էր աղօթողներով, թէ շրջակայ և թէ տեղական ժողովուրդը շտապել էր մասնակից լինել այդ ուրախութեան և աղօթելու առ Աստուած Ռուս քաջարի զօրքի համար։ Մաղթանքից յետոյ Վեհափառ Հայրապետը շրջապատուած միաբաններով դուրս եկաւ Տաճարից։ Անվերջ կեցցէներով թնդաց օդը։ Վեհափառը միաբանների հետ բարձրացաւ Վեհարան։ Ժողովրդի խումն մեծ բազմութիւնը տեղ բռնեց Վեհարանի բակում։ Տեղական երեք խումբ նուազողները նուազում էին։ Ժողովրդի ուրախութիւնն իւր գազաթնակէտին էր հասել։ Վեհափառն պատշգամբից դառնալով ժողովրդին խիստ զգացուած խօսեց, բարեմաղթութիւններ արաւ նորին Կայսերական Մեծութեան և Օգոստոսիան Տան կենաց, Կովկասի Տ. Փոխարքայի առողջութեան, Ռուս քաջարի զօրքին կարողութիւն և յաղթանակ շնորհելու և հայ անձնուէր կամաւորներին յաջողութիւն բաշխելու համար։ Ապա ժողովուրդը հետզհետէ սկսեց ջրուել ուրախ տրամադրութեամբ։

Ամբողջ միաբանութիւնը, Երևանից եկած հիւրերը գլխաւորութեամբ Տ. Խորէն եպիսկոպոսի՝ ներկայանալով Վեհափառին՝ շնորհաւորեցին Վանի գրաւման առթիւ և համբուրելով Հոգեւոր Տիրոջ ս. աջը՝ ստացան նորա օրհնութիւնը։



Տ. ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՌՇՏՈՒՆԻ

Մայիսի 10-ին կէս օրուայ ժամը 12-ին երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր մահկանացուն ս. Էջմիածնի միաբան Տ. Գէորգ վարդապետ Ռշտունի 58 տարեկան հասակում: Ստացել էր տնային կրթութիւն: Կուսակրօն հոգևորականների շարքում ընդունուել է 1879 թ. սեպտ. 15-ին. կուսակրօն արեղայ ձեռնադրուել է 1887 թ. յունիսի 14-ին, վարդապետական մասնաւոր կոչումն է ընդունել 1894 թ. մարտի 7-ին: Ներքին գործոց նախարարի թոյլտուութեամբ ուսանալատակութիւն է ընդունել 1897 թ. յունվարի 14-ին: Ս. Էջմիածնի միաբան է ընդունուել Տ. Տ. Մկրտիչ կաթողիկոսի օրօք 1897 թ. 6-ն փետրվարի կոնգակով: Եղել է Խոր-Վիրապի և Մողնու վանքերի վանահայր և Մայր Աթոռի հիւրընկալ: Այս կարգուել է ժամօրհնող Մայր Տաճարի, որպիսի պաշտօնից հեռացաւ 1¹/₂ տարի առաջ հիւանդութեան պատճառով: Հանգուցեալը խաղաղ ընաւորութեան տէր անձն էր: Թող թեթև լինի հողը հանգուցեալի գերեզմանի վրայ:

Մայիսի 24-ին մեծ շուքով կատարուեց ս. Էջմիածնի տօնը: Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութեան և ժողովրդոց խումբն բազմութեան ուղեկցութեամբ հանդիսաւոր կերպով նորին Վեհափառութիւնը բարեհաճեց իջնել Մայր Տաճար: Հանդիսաւոր ս. պատարագն մատուցեց Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը: Ս. Պատարագից յետոյ կատարուեց Հայրապետական գոհաբանական մաղթանք: Երեկոյեան հրավառութիւն կար վանքի բակում:

Մայիսի 18-ին և 19-ին ըստ սովորականին կատարուեցին Հռիփսիմեանց և Գայիանեանց տօները համանուն վանքերում: Գայիանեանց տօնին վանքում ս. պատարագին ներկայ էր նաև Վեհափառ Կաթողիկոսը: